

ԿՕՉՆԵՕՍ ԿԱՐԻՔԱԴՈՐԻՆ

Մի տրամիր, որ հարստութիւնդ կը պակսի, որովհետեւ նոյնքան ալ մեղքերդ կը պակսին, երբ դրամը կը հեռացնես քեզմէ, նաեւ մեղքերդ կը հեռացնես եւ քու պիղծ գործերուդ աղտոտութենէն կը սրբուիս, ինչպէս կ'ըսէ Տէրը. «Ինչ որ կրնաք տուէք իբրեւ ողորմութիւն եւ ահա ամէն ինչ մաքուր պիտի ըլլայ ձեզի համար»: (Դուկ.11.41): Ողորմածին մարմինը ողորմութեամբ կը սրբուի, հոգին եւս կը սրբուի, ինչքերը կ'օրհնուին, յաջող աշխատանք կ'ունենայ, արջառը կ'աճի, ոչխարներուն հօտը կը բազմապատկուի եւ արտերը կը պտղաբերին, եթէ երբեք աղորմութիւն ընէ Աստուծոյ կամբով, որովհետեւ երբ աղքատներուն ողորմութիւն կ'ընես, զայն Աստուծոյ փոխ կու տաս եւ Աստուած ասոր փոխարէնը կու տայ ո՛չ միայն այն որ ըսաս վերը, այլեւ՝ ողորմածին կու տայ արքայութիւն, կը փրկէ զայն թշնամիին որոգայթներէն եւ կ'ազատէ դժոխքէն: Թէեւ մեծ սրբութիւն է կուսութիւնը, սակայն աւելի պատուական է ողորմութիւնը: Թէեւ մեծ է պահեցողութիւնը, մեծ են բազմաթիւ առաքիւնութիւնները, սակայն ողորմութիւնը աւելի մեծ է եւ կարեւոր ու Աստուծոյ ընդունելի: Ողորմած մարդը մեծ է եւ պատուական. ան որ ողորմութիւն չ'ըներ, Ս. Գիրքը այդպիսին մարդ չ'անուանէր, այլ շուն, խոզ եւ զազան, որ միայն կ'ուտէ: Արդարեւ, նման մարդիկ ճրագ են՝ առանց լոյսի, աչք են առանց տեսութեան, որոնք անուն ունին միայն բայց ոչ օգտակարութիւն:

ՄՇՏԱԿԱՌ ԿԱՆԹԵՂ

Անդրադարձանք կանթեղի մասին: Եկեղեցոյ կանթեղներուն մէջ կ'առանձնանայ Մշտավառ Կանթեղը, որ անմար կերպով կը վառի նախ տմոյն լոյսով մը Խորանին խաւարը փարատելու համար, միաժամանակ՝ որպէս պատիւ եւ մեծարանք Ս. Սեղանին:

Այստեղ կ'ուզեմ մէջբերել հայ ժողովուրդի աւանդապատումէն գեղեցիկ եւ իմաստալից պատմուածք մը, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի Անմար Կանթեղին վերաբերեալ, գետեղուած՝ Արագածի կատարին:

Առինքնող եւ բանաստեղծները ներշնչող Լուսաւորիչ Հայրապետի արցունքով վառ մնացող Մշտավառ Կանթեղը, որուն մէջ ժողովուրդը դարեր շարունակ ուզած է տեսնել իր իսկ անմահութեան ճանապարհը, երաշխաւորուած հետեւեալ երբեակ գլխաւոր ճշմարտութիւններով, որոնք պատմութեան պատգամը կը փոխանցեն մէն մի հայու.

- Հաւատք՝ Լուսաւորչեան լոյսով օծուն, որ թանձրացումն է Հայց. Առաքելական Ս. Եկեղեցոյ:
- Ազգային խոր գիտակցութիւն, որ գօտեպնդումն ու հզօրացումն է Հայաստանի եւ Հայութեան:
- Եւ տեսիլք՝ ապագայի լոյս զալիքին:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԶԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 30 ՅՈՒՆԻԱՐ 2022 ԹԻՒ 5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 62.1-12: Բ. Տմ. 2.15-19 Յհ. 6.39-47

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎԿԱՆՆԵՍԻ 6.39-47

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.
«Ձիս դրկող Հօրս կամքն է, որ չկորսնցնեմ ոչ իսկ մէկը բոլոր անոնցմէ՝ որոնք ինձի տուաւ, այլ՝ յարուցանեմ զայն վերջին օրը: Հօրս կամքը հետեւեալն է. ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ յաւիտեանական կեանք կ'ունենայ եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը»:

Հրեաները սկսան տրտնջալ իրեն դէմ, որովհետեւ ըսած էր, թէ. «Ես եմ երկինքէն իջած հացը», եւ կը հարցնէին. «Այս մարդը Յովսէփի որդին Յիսուսը չէ՞, որուն հայրն ու մայրը կը ճանչնանք: Ինչպէ՞ս ուրեմն կ'ըսէ. «Ես երկինքէն իջայ»»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կը բաւէ դուք ձեզի քրթմնջէք: Ոեւ մէկը չի կրնար ինձի գալ, եթէ զիս դրկող Հայրը զայն ինձի չբերէ եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը: Մարգարէութիւններուն մէջ գրուած է. “Ամէն մարդ Աստուծմէ ստրված պիտի ըլլայ”: Ով, որ Հօրմէս կը լսէ եւ իրմէ կը ստրվի՝ ինձի կուգայ: Ոչ որ Հայրը տեսած է, բացի անկէ որ Աստուծմէ է, որովհետեւ միայն անիկա տեսած է Հայրը: Ու ես կ'ըսեմ ձեզի. ով որ ինձի հաւատայ՝ յաւիտեանական կեանքը կ'ընդունի»:

=====

Որպէսզի կարենանք փրկուիլ, անհրաժեշտ է Քրիստոսը հրաւիրել մեր կեանքերուն մէջ ո՛չ միայն իբրեւ Փրկիչ, այլեւ՝ իբրեւ Տէր: Շատեր զայն կ'ընդունին իբրեւ Փրկիչ բայց անոր հետ չեն վերաբերիր իբրեւ Տիրոջ: Քրիստոս Փրկիչն է այո՛, բայց միաժամանակ Տէր է: Ան Փրկիչ է, որովհետեւ մեզ փրկեց յաւիտեանական դատապարտութենէն եւ Տէր է, որովհետեւ մեզ ազատեց Սատանային տիրապետութենէն՝ որպէսզի ի՛նք ըլլայ մեր Տէրն ու մեր վրայ տիրապետողը: Երբ մէկ կողմէն կ'ընդունինք իր Փրկիչ ըլլալը, բայց միւս կողմէն մեր կեանքին վերաբերեալ բոլոր որոշումները մենք է որ կ'առնենք, այդ կը նշանակէ՝ թէ Յիսուսի կամքն ու խօսքը չեն, որ կը տիրեն մեր կեանքերուն մէջ, այլ՝ մեր կամքն ու խօսքը:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԾԱԲԱՆ

Շաբաթ՝ 29 Յունուարին տօնն է Գրիգորի Աստուածաբանին: Ուստի եկե՛ք միասնաբար ծանօթանա՛մք սուրբին:

Եկեղեցւոյ գերագոյն վարդապետներէն մին է Գրիգորը: Կապաղովկիոյ Նագրիանգ քաղաքէն էր: Որդին էր հեթանոս հօր եւ քրիստոնեայ մօր եւ այս վերջինին ջանքով կանուխ ստացաւ քրիստոնեական դաստիարակութիւն: Յիսուսն տարեկանին հայրն ալ մօրը ջանքերով դարձաւ քրիստոնեայ եւ մկրտուեցաւ: Նագրիանգու եպիսկոպոսը երբ մեռաւ, Գրիգորիս անունով մէկը կոչուեցաւ նոյն աթոռին եւ ձեռնադրութիւն ստացաւ Կեսարիոյ միեւնոյն եպիսկոպոսապետէն: Գրիգոր Աթենքին մէջ իր ուսմանց ընթացքը աւարտելէ ետք Կ. Պոլսոյ նամբով դարձաւ իր հայրենիքը, միշտ ինքզինքն նուիրելով հոգեւոր պարապումներու:

Գրիգոր իր մօրը մահէն ետք բաշտուեցաւ Իսաւրացւոց Սելեւկիա քաղաքը, Ս. Թեկղի եկեղեցին: Այդ միջոցին Քրիստոսի եկեղեցին ծանր տագնապ մը կ'անցընէր մասնաւորաբար Արեւելի մէջ, ուր Կոստանդիանոսի մահէն վերջ դարձեալ գորացած էր Արիոսի աղանդը եւ մայրաքաղաքին հոգեւոր կեանքը գրեթէ բոլորովին անոնց ազդեցութեան տակ էր: 397-ին, Անտիոք գումարուած եպիսկոպոսաց ժողով մը նկատի առնելով այս կացութիւնը, ստիպողաբար յանձնարարեց Գրիգորի՝ Կ. Պոլիս երթալ եւ ուղղափառութիւնը պաշտպանելու համար իր կարելին ընել: Անվարան համակերպեցաւ անիկա այս յանձնարարութեան, եւ կուրծք տալով ամէն կերպ հակառակութեան՝ գորս աղանդաւորները յարուցին իր վրայ յա-

ջողեցաւ խորտակել անոնց գորութիւնը, իր բարձրօրէն համոզիչ եւ պայծառ վարդապետութեամբ արժանանալով աստուածաբան տիտղոսին: Արիոսեանները, Մակեդոնեանները, Սաբելիանները եւ ուրիշ աղանդներ, ամէնքն ալ սքանչացան իր պերճախօսութենէն: Ամէն կողմ տարածուեցաւ իր համբաւը, Հերոնիմոսի նման գիտուն գլուխ մը պատիւ համարեց աշակերտել իրեն: Այն ատեն մեծամասնութիւնը միացաւ եւ իրեն հետ ունենալով Աղեփսանդրիոյ Պետրոս պատրիարքի գրաւոր հաւանութիւնը, մայրաքաղաքին եպիսկոպոս կարգեց զինք: Բայց քիչ ետք, նոյնիսկ կարգ մը ուղղափառներու կամակցութեամբ, դարձեալ հակառակութիւն յարուցուեցաւ իր դէմ, եւ փոխանակ իրեն՝ Կ. Պոլսոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մաքսիմոս Աղեփսանդրացի: Բայց ժողովուրդը չհանդուրժեց այս անիրաւութեան, եւ բուն թափով պաշտպանեց Աստուածաբանը: 380-ին երբ Թեոդոս կայսրը Կ. Պոլիս դարձաւ պատերազմներէն, դարձեալ գորացաւ Գրիգորի դիրքը: Յաջորդ տարին, Կ. Պոլսոյ Տիեզերական ժողովին մէջ հաստատուեցաւ եւ յայտարարուեցաւ իր պատրիարքութիւնը: Սակայն կարն ժամանակ ետք յաջողկոտներու երեսէն, հարկադրուեցաւ հրաժարիլ վերջապէս մայրաքաղաքի եպիսկոպոսական աթոռէն եւ Նագրիանգի մօտ, Արիագոն գիւղին մէջ ապրեցաւ առանձնական կեանք մը, ինքզինքն նուիրելով եկեղեցական գրականութեան եւ մեռաւ 389 թուականին: Գրիգորի գործերը բազմահազար են: Այս գործերէն կարելոր մասը թարգմանուած է հայերէնի:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՈՒՆԵՅՈՒԾ ՉԵՉԻՆՎ ՏԻՐՈՋ ՅՆՆՁՆԷ

Աշակերտները Յիսուսի ըսին. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ» (Մտ. 14.17): Աշակերտները կը մտածէին, որ իրենց ունեցածը ոչինչ է: Բայց Յիսուս սուրբ վեցուց անոնց իրենց «ոչինչ» նկատած հինգ հացերն ու երկու ձուկերը դնել իր տրամադրութեան ներքեւ, որպէսզի այդ «ոչինչ» նկատուած ուտելիքով կերակրէր հսկայ բազմութիւն մը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Երբեք չմտածենք, որ բան մը չունինք Տիրոջ բերելիք: Տէրը մեզմէ մեծ բաներ չի պահանջեր: Իր պահանջածը մեզմէ մեր պատրաստակամութիւնն է, մեր փափաքն է, մեր կամեցողութիւնն է, բայց մանաւանդ, մեր ունեցած չնչին բանը իր տրամադրութեան ներքեւ դնելն է: Կը բաւէ, որ ուրիշին օգտակար դառնալու կամեցողութիւնը ունենանք, եւ մեր ունեցած չնչինը (նիւթական թէ կարողութիւն իբրեւ) Աստուծոյ յանձնենք եւ ահա Աստուած մեզ պիտի գործածէ անօթի հոգիներ կշտացնելու համար, մեծ կարիքներ գոհացնելու համար:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ՅՈՒՍԱՐԱՄՑ ԵՍ, ԴԻՍԷ ՏԻՐՈՋ ՍԱՂՄՈՍ 28

Տէ՛ր, օգնութիւն կ'ուզեմ քեզմէ: Դուն ես իմ պատասխանս: Ականջներդ մի՛ փակեր. լուռ մնալդ պատճառ կ'ըլլայ որ ես ողջ-ողջ գերեզման իջնեմ:

Լսէ՛ խնդրանքս, երբ որ քեզմէ օգնութիւն կ'աղերսեմ, երբ ձեռքերս դէպի սուրբ տաճարդ կը բարձրացնեմ:

Ձիս մի՛ դասեր ամբարիշտներուն հետ: Անոնց՝ որոնք չարիք կը հասցընեն ուրիշին, որոնք իրենց խօսքերուն մէջ սիրալիր են մարդոց հետ, մինչ իրենց սիրտերուն մէջ չարութիւն կայ:

Պատուիստ՝ զանոնք իրենց գործերուն համաձայն, տո՛ւր արժանի պատիժը իրենց չարսիրտ վարմունքին: Իրենց ըրածին համեմատ վարուէ՛ իրենց հետ, հատուցանելով իրենց այն ինչ բանի որ արժանի են:

Քանի որ անոնք կ'արհամարհեն Տիրոջ գործը եւ ինչ որ ան ստեղծեց, Տէրը զանոնք պիտի կործանէ այնպիսի ձեւով, որ ալ երբեք չկանգնին:

Օրհնեա՛լ է Տէրը, որ աղօթքիս պատասխանեց:

Չօրութիւնս է ան եւ իմ պաշտպանս: Ես իրեն կը վստահիմ: Իրմէ կու գայ օգնութիւնս եւ իմ սիրտս կը ցնծայ, հետեւաբար իմ երգովս անոր գոհութիւն պիտի յայտնեմ:

Տէրը իր ժողովուրդին գորութիւնն է եւ իր օժեպիւն ապաւէնն ու փրկիչը:

Տէ՛ր Փրկէ՛ եւ օրհնէ՛ քու ժողովուրդդ, որ քու ժառանգութիւնդ է: Դուն հովուէ՛ զանոնք եւ ուսիդ առած առաջնորդէ՛ մինչեւ յաւիտեան: